




Եվրոպական Միության հովանավորությամբ 2015 թվականի հոկտեմբերի 16-ից 18-ը Բուդապեշտում տեղի ունեցավ «Եվրոպայի Սփյուռքը» անունը կրող եռօրյա համագումար «Հայերի, հրեաների և ռոմերի փոքրամասնությունները Եվրոպայում՝ որպես մշակութային ժառանգություն» խորագրով: Այս երեք փոքրամասնությունների միացման կետը 20-րդ դարի ցեղասպանության ողբերգությունը կրող ժողովուրդներն են, որ ապրում են Եվրոպայում: Հայկական փոքրամասնությունը ներկայացնում էր Ֆրանսիայի «ՀԱՌԱՋ» օրաթերթի խմբագիր Ժիրայր Չոլաքյանը. նա իր մասնակցությունն էր բերել որպես հայ մշակութային գործիչ: Համագումարի ընթացքում արծարծվեցին տարբեր խնդիրներ և հարցեր՝ կապված 3 փոքրամասնությունների հետ:

Հայկական փոքրամասնությունը ներկայացնող երկրորդ անդամն էր Հայկական վիրտուալ համալսարանի հիմնադիր-նախագահ, ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովի անդամ դր. Երվանդ Ջորյանը:

ՀՎՀ ծրագիրը հիմնադրվել է 2004 թվականին ՀԲԸՄ Սիլիկոն Վելի մասնաճյուղի նախագահ դոկտոր Երվանդ Ջորյանի կողմից: Տարիներ շարունակ նա նշել է նման մի կրթական ծրագրի ստեղծման անհրաժեշտության մասին, որն ուղղված կլինի հայրենիքում և Սփյուռքում հայ ժողովրդի ներկայիս պահանջներին: Այսօր ՀՎ համալսարանը 10 տարեկան է:




Գիտաժողովում դր.Ջորյանը, Հայկական սփյուռքի մեծ փորձն օրինակ բերելով, իր ելույթում անդրադարձավ Հայկական վիրտուալ համալսարանի ստեղծման օրինակին. որ այսօր տեխնոլոգիաների հարուստ հնարավորությունները լայնորեն կիրառվում են

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կողմից, որի նպատակը աշխարհի հայության համար հայկական կրթություն ստանալու հնարավորություն ստեղծելն է: Այն օրինակ բերելով՝ մատնանշեց, որ այսօր Սփյուռքում հայկական դպրոցներ հաճախելու հնարավորություն ունեն դրսում ապրող հայերի միայն 5%-ը, ուստի դրսում հայկական կրթության մեծ պակաս կա: «Վիրտուալ համալսարանն օգնում է հայապահպանությանը, քանի որ աշխարհի տարբեր ծայրերում գտնվող մարդիկ այսօր համացանցի շնորհիվ կարող են մասնակցել համալսարանի դասերին»:

«Տեխնոլոգիական զարգացումը մեզ հնարավորություն է տալիս վիրտուալ կրթություն իրականացնել, ինչը նշանակում է, որ ուսանողն այլևս ունի իր Մայրենին և իր մշակույթը պահպանելու հնարավորություն. հեռաուսուցման շնորհիվ մենք հայեցի դաստիարակություն կամ հայկական կրթություն ենք տալիս ամեն տեղ»: ՀԲԸՄ-ն Սփյուռքում գոյություն ունեցող հայկական կրթության ամենամեծ ինստիտուտն է, որը 20-ից ավելի ամենօրյա դպրոցներ ունի աշխարհի տարբեր ծայրերում: Վիրտուալ համալսարանի ստեղծման գործում մեծ նշանակություն են ունեցել ՀԲԸՄ-ի կրթական փորձառությունը և ֆինանսական աջակցությունը:

Հայկական վիրտուալ համալսարանում ուսուցումն իրականացվում է տարբեր լեզուներով՝ հայերեն (արևելահայերեն և արևմտահայերեն), անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն և իսպաներեն: Վերջին մի քանի ամիսներին համալսարանում մշակված նոր ծրագրի շնորհիվ համալսարանում հայերեն կարելի է սովորել նաև թուրքերեն լեզվով: «Թուրքիայում ապրող իսկական կամ իսլամացած հայերն այլ լեզուների կողքին այսօր հնարավորություն ունեն հայերեն սովորելու նաև թուրքերենով»:

Հայկական վիրտուալ համալսարանն ուսանողներ ունի շուրջ 50 երկրներից, սակայն ամենաշատ ուսանողներն ԱՄՆ-ից են, որին հաջորդում է Վրաստանը, Ֆրանսիան, Ռուսաստանը, Հայաստանը, Կանադան, Ուրուգվայը, Արգենտինան և այլն: Ամենաքիչ ուսանողները Թուրքիայից են: «Կան ուսանողներ նաև այնպիսի երկրներից, որտեղ հայեր չկան կամ շատ քիչ են, օրինակ, Աֆրիկայի փոքրիկ Ռեյինյոն կղզուց, չորս աշակերտ ունենք Շանհայից, որոնցից ընդամենը մեկն է հայ, իսկ մյուսները հայերի տիկիներն են, որոնք ամուսնացել են հայերի հետ և սկսել են հայերեն սովորել», - ասաց Ե. Ջորյանը՝ նշելով, որ համալսարանի ուսանողների աշխարհագրությունը տարեցտարի ավելանում է:



Գիտաժողովի ավարտին առիթ ունեցանք հանդիպելու և զրուցելու դր. Ջորյանի հետ այն մասին, թե Հունգարիայում ապրող հին և նոր հայերի համար ինչպիսի լավ գաղափար է Հայկական վիրտուալ համալսարանի ստեղծումը. «Հունգարիան, ինչպես գիտենք, պատմական հին ավանդական Սփյուռք ունեցող համայնք է, որտեղ հայկական դպրոցներ կամ նույնիսկ լուրջ շաբաթօրյա դպրոցներ գոյություն չեն ունեցել, այս իսկ պատճառով Հայկական առցանց համալսարանը լուրջ հնարավորություն է այն մարդկանց համար, ովքեր ուզում են հայերեն սովորել: Դա կարող են անել տնային պայմաններում համացանցի

միջոցով կամ նույնիսկ խմբակային ձևով, ինչը առիթ կհանդիսանա, որ հայերը լինեն կողք կողքի, հանդիպեն միմյանց և ուսուցչի միջոցով հայերեն սովորեն, բայց միջոցը ոչ թե դասագիրքն է լինելու, այլ համակարգիչը: Այս ծրագիրը իրականացվում է շատ հայկական համայնքներում, հատկապես հայոց լեզու, հայոց պատմություն և հայկական մշակույթ բաժիններով: Սա շատ լավ առիթ է բոլորի համար, ովքեր չեն սովորել հայերեն, պարզապես միջոցներ չեն ունեցել կամ տանը հայերեն խոսող չի եղել: Մինչ օրս Հունգարիայից ոչ մի ուսանող չունենք, հուսանք, որ սա առիթ կհանդիսանա և կլինեն հետաքրքրվողներ: Հայկական վիրտուալ համալսարան կարող եք այցելել www.avc-agbu.org կայքէջ և ստանալ ձեր բոլոր հարցերի պատասխանները»: